

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ՄԱՅԿԱՆ ՏԵՍԻԼ»-ՆԵՐԻ ԽՈՍՔԱՐԿԵՍՈՑ

Ն. Գ. ԹԻՐԱԲՅԱՆ

Գրական ուղու կարևոր հանգուցակետերում Ե. Չարենցը գրել է «Մահվան տեսիլ» խորագրով երեք ստեղծագործություն. առաջինը՝ 1920-ին, երկրորդը՝ 1933-ին և երրորդը՝ 1936-ին, որոնք լեզվի պատկերավորման միջոցների հարստությամբ ու ինքնատիպությամբ, ոճական հնարանքների բազմազանությամբ առանձնակի տեղ են գրավում բանաստեղծի ողջ գրական ժառանգության մեջ:

Ե. Չարենցի «Մահվան տեսիլ»-ների հանգամանալից ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի դեպքի կամ իրադարձության անմիջական ազդեցությամբ գրված այդ երկերը բովանդակային առումով միմյանցից էականորեն տարբեր են, և այդ տարբերությունները դրսևորված են նաև արտահայտչական մակարդակում: Յուրաքանչյուր «Տեսիլ»՝ իբրև գեղարվեստական առանձին միավոր, նաև բառապաշարի, լեզվաոճական տարրերի, պատկերավորման միջոցների ուրույն ու անկրկնելի համակարգ է:

Առաջին «Մահվան տեսիլը» Ե. Չարենցը գրել է 1920 թ.: Նա նախ ստեղծել է ահավոր տագնապներով հագեցած մթնոլորտի, իրիկվա՝ որպես ամեն ինչի վերջի ու հայ կյանքի ավարտի սարսուղադու պատկերը: Քնարական հերոսի հետ նույնացած հեղինակի հոգեկան ծանր տվյալանքները կախադանի տեսարանին ու այդ մահատեսիլ մթնոլորտին միահյուսվում են դիպուկ ու բնորոշ բազմաթիվ մակդիրների միջոցով՝ *ահարկու կարոտ, կարոտների գագաթ, վերջին քնար, բախտի մութ քամահրանք, օրերի մորմոք, դրժած թողած մի հին խոստում, գորշ ու կքած խանութներ, մարող ու մարմող իրիկուն, մեղկ, երերուն մի գորշ պարան, մահվան բեկուն քնար, լուսնահար սիրտ, մթար երգ* և այլն: Իսկապես էլ, այս մթնոլորտում առավել ընկալելի ու տպավորիչ է դառնում *իր բորբ երկրի լուսապսակ ապագայի* համար զոհաբերվելու պատրաստական քնարական հերոսի կերպարը:

Որոշակի քանակություն են ներկայացնում Ա.Ն. ածականակերտ ժխտական նախածանցով կազմված մակդիրները, որոնք ավելի թանձրացնում են գույները, ավելի ընկալելի ու տեսանելի դարձնում մահվան տեսիլը՝ *անկատար խոստում, անբոց մորմոք, անհուր իրիկնաժամ, անմխիթար կարոտ, անդուռ, անդող, անստվեր լուրություն, անկրակ իրիկնաժամ* և այլն, որոնք սովորական բնութագրումներ չեն, այլ երևույթը ավելի արտահայտիչ ու հուզական դարձնող մակդիրներ:

Առհասարակ, Ե. Չարենցի բաների աշխարհը հարուստ է ու տիպական, սակայն այս բանաստեղծության մեջ նա կիրառել է բառօգտագործման ու դրանց շարակարգման ուրույն եղանակ, որով իրիկնամտի, նախրյան գորշ քաղաքի ու ահաբեկված մարդկանց համապատկերում ընդգծվում է երկնուղեշ կախադանի պատկերը: Առկա են նաև կրկնություններ, ինչպես՝ *որպես լքված թավջութակի ձգված մի լար, որպես բախտի մութ քամահրանքը, որպես մի հին խոստում, որպես ուրու հայածական, որպես տեսիլ, ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան մահվան թախիծը, կանգնել են լուռ իրար կքած փայտեր երկու, գորշ խանութներ, գորշ պարան, մարող ու մարմող իրիկուն, երկնուղեշ կարոտ, երկնուղեշ փայտեր* և այլն, որոնք ունեն երկակի դեր. մի կողմից դրանք զորեղացնում են չափածոյի դիմն ու երաժշտականությունը, մյուս կողմից ավելի ընդգծում, կրկնապատկում են հեղինակի ասելիքը, նրա խոսքը դարձնում առավել հուզական, դիպուկ ու նպատակասլաց:

Բանաստեղծության մեջ հետաքրքիր է նաև ՈՒ միավորիչ շաղկապի գործածությունը: Յուրաքանչյուր դեպքում այն ձեռք է բերում ոճական հատուկ արժեք: Բաներ ու բառակապակցություններ կապակցող այդ շաղկապը, միավորելով հանդերձ, ունի նաև կապակցվող կողմերի իմաստային ինքնուրույնությունն ընդգծող դեր՝ *ու խանութները գորշ, կքած, ու այն մարդիկ, ու լուսավոր առավոտները իմ հոգու, ու գորշ պարան ու երկնուղեշ փայտեր երկու* և այլն:

Բանաստեղծությանն առանձնահատուկ հուզական լիքը են հաղորդում նաև կրկնվող ճարտասանական հարցերը՝ Եվ արդյոք *ո՛չ է երագել այսքան դաժան*, Ու լուսավոր առավոտներ իմ հոգու *Ո՛չ դարձրեց մի ամկրակ իրիկնաժամ...*, *Ի՞նչ են ուզում* այսպես տխուր ու ակամա:

Այս մթնոլորտին միահյուսվում և միաժամանակ ընդգծվում է հեղինակի հետ նույնացած քնարական հերոսի կերպարը: Այդ հերոսն է, որ միայնակ մտնենում է կախաղանի՝ իր եղերակյան ու անբասիր մահով բուրբին փրկելու առաքելությամբ.

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգա՛ն.
Եվ թող տեսնեն իմ՝ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛րբ երկիր, լուսապսակ քո ապագան...

1920 թ. «Մահվան տեսիլում» իրոք ողբերգական մթնոլորտի, ծանր դժբախտության մեջ հայտնված իր հայրենիքի ու ժողովրդի փրկության համար զոհաբերության պատրաստ բանաստեղծի մարդկային ապրումները ներկայացնելու համար Ե. Չարենցը կիրառել է տազնապ, մահ, զոհվելու անհրաժեշտության գիտակցություն պատկերող մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների, կախաղան, մահ, մայրամուտի մոայլ գույներ նշանակող բառերի, բառակրկնությունների մի համակարգ, որով հասել է առավել տպավորիչ հուզականության, կարողացել է զարմամալի զգացողությամբ կանխատեսել Հայաստանի՝ իր «բորբ երկրի լուսապսակ ապագան»:

1933 թ.՝ մեր ժողովրդի համար մի շարք առումներով բարդ ժամանակում, Ե. Չարենցը հստակ նպատակադրումով քննում էր ազգային պատմական ճանապարհի՝ անցյալի, ներկայի ու գալիքի խնդիրները՝ գտնելով ուղղակի հանճարեղ բնութագրական բանաձևումներ.

Աչքերս հատել եմ անցյալին՝ ապագայի նժույզը նստած:

Կրկին Չարենցը դիմում է տեսիլի ժանրին, գրում «Մահվան տեսիլ» պոեմը՝ բնաբան վերցնելով Սիամանթոյի «Մահվան տեսիլի» առաջին տողը՝

Կոտորած, կոտորած կոտորած...

Երկրորդ «Մահվան տեսիլը» թե՛ իր ծավալով, թե՛ պատկերավորման միջոցների հարստությամբ ու բազմազանությամբ ավելի առատ նյութ է տալիս թե՛ գրականագիտական, թե՛ զուտ լեզվաբանական, թե՛ ռեալիտական ուսումնասիրությունների համար: Նկատելի է, որ այստեղ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ զաղափարական տարբեր դիրքորոշումների պատկերման, հանրային ու մշակութային գործիչների կերպավորման նպատակով փոխված են թե՛ տաղաչափական կառույցը, թե՛ բառապաշարը, թե՛ ռեական հնարանքներն ու պատկերավորման մյուս միջոցները:

«Ատավածային կատակերգության» հեղինակին՝ Ալիգիերի Դանթեին, Ե. Չարենցն ընտրում է երևակայական առաջնորդ ու նրա հետ միասին ուղևորվում է մոայլ գույներով մի աշխարհ, մի նոր դժոխք, որը, սակայն, ազգային է, հայկական: Պոեմում պատկերվում են տեսիլներ ու տեսլային գործողություններ, որոնց հերոսները վերջին ժամանակների հայ գրողներն ու մտավորականներն են, հոգևորականները, ազգային գործիչները. կուսակցական առաջնորդները, որոնց ուրվապատկերները շարժման ու գործողության մեջ են դրված երևակայական դժոխքի մեջ: Այդ զարհուրելի աշխարհը ներկայացնելու համար Չարենցն օգտագործել է բնորոշ բառաշարը՝ *ահ, արյուն, գանգ, գերություն, դճի, դժոխք, թափոր, լուռություն, կմախք, հառաչ, մահ, մոխիր, ոսկոր, սարսափ, սոսկում* և այլն, բառեր, որոնք, հանախակի կրկնվելով, ստեղծում են համապատասխան տրամադրություն և առավել տպավորիչ ու ամբողջական են դարձնում զարհուրելի դժոխքի պատկերը:

Արյուն և մահ արմատների բառաբարդումով ու ածանցումով Ե. Չարենցը կազմել է ռեական արժեք ունեցող բազմաթիվ բառեր, որոնց գործածությամբ առավել թանճարանում ու սաստկանում են մղձավանջային տեսիլները: Այսպես՝ *արնագույն, արնաթոր, արնակարմիր, արնակից, արնավառ, արնաքամ, արյունոտ, մեռյալ, մահամերձ, մահատիպ, մահաշունչ, մահագույժ* և այլն:

Երկրորդ «Մահվան տեսիլում» էլ առատ են մակդիրները՝ արտահայտված ածական-ներով, գոյականներով, դերբայներով: Զարեհցյան մակդիրները ձեռք են բերել մոր իմաստ ու նշանակություն: Ահա դրանց մտապոր մի ցանկ. գոյականով՝

Բարբարոս հորդաններ, բարբարոս փոշի, մութ ու խավար անտառ, պողպատ զսպանակ, կավիճ դեմքեր և այլն: Ածականով՝ անայլալ և իմաստուն լույս, անէ օրեր, զառամյալ մանկություն, ամեհի հուր, անդեմ կերպարանք, անկաշառ մարգարե, արծաթյա տավիղ, առնական ամրոցներ, արնակարմիր տեսիլներ, արնափրփուր գետ, կմախքե ձիեր, գունատ մահիկ, լուսազարդ ճանապարհ, հանճարափայլ պարզև, մոայլ բացատ, տառապյալ հանճար, պղնձյա արշավանք, սրբազան միրիկ և այլն: Դերբայներով՝ այլայլված հայացք, գրկող ու գերող բազուկներ, խամրած խարույկ, կաղկանձող նվագ, մոխրացած, հանգած խարույկ, մոռացած ժպիտ, շանթող աչքեր, չորացած մատներ և այլն:

Ե. Զարեհցի նախասիրած ոճական հնարանքներից են ինչպես նույն մակդիրի գործածությունը տարբեր գոյականների հետ՝ *մարմարյա Հոմերոս, մարմարիոնյա նծույզներ, մարմարիոնյա դեմքեր, բարբարոս փոշի, բարբարոս հորդաններ, բարբարոս բույր, քարե ընկեր, քարե շուրթեր, քարե կերպարանք և այլն*, այնպես էլ տարբեր մակդիրների գործածությունը միևնույն գոյականի հետ՝ *չորացած մատներ, միհար մատներ, մոմե մատներ, դեղին մատներ, լեզուն կտրած ասպետ, կտրացած ասպետ, խեղդամահ ասպետ, կույր շքերթ, հոշոտված շքերթ, հաշմանդամ շքերթ, անայլալ լույս, իմաստուն լույս, մեռյալ լույս և այլն:*

Պակաս կարևոր չէ և չարեհցյան ոճի մի այլ յուրահատկությունը՝ հոմանիշ մակդիրների կիրառությունը՝ *մաքուր, անբիծ շրթեր, մաքուր, ջինջ ցող, մոմեղեն, սփրթնած, գունատ դեմք, դժմի, արյունոռուշտ դեմք, պայծառ, մաքուր ձայն, ալ, արնագույն, կարմրագույն բոց, անվերջ, անթիվ թափոր, մթին, մոայլ կերպարանք, մոայլ, մութ անտառ, երերուն, տարտամ քայլեր, մոխրացած, խամրած խարույկ, սևահեր, թխադեմ այր, անսահման, անծիր հեռուներ, ինչպես նաև սովորական հոմանիշների գործածությունը՝ հերկեր - դաշտեր, թմբուկներ - ծնծղաներ, հեկեկանք - լաց, շոհոն - շառաշ և այլն:* Երբեմն էլ գոյականի հետ նա գործածել է միանգամից մի քանի մակդիրներ՝ *անպտուղ, քարքարոտ և լուռ անպատ, դանդաղ, հանդարտ, անեղ թափոր, չոր, բարակ, հսկա ճակատ, աճող, ծավալվող, լեռնացող ծով և այլն:*

ԱՆ նախածանցով Ե. Զարեհցն ստեղծել է բազմաթիվ մակդիրներ, որոնք ժխտական իմաստ են հաղորդում պատկերվող երևույթներին.

*Անազատ կյանք
անայլալ լույս
անայլալ ձայն
անատամ աղչիկներ
անբառ լռություն
անբիծ շրթեր
անդարձ ճանապարհ
անդարձ ժպիտ
անդեղ վիշտ
անէ օր
անընդհատ ձայն
անիմաստ տեսիլ*

*անլույծ ոգի
անհարթ բարբառ
անհաղորդ հարված
անհուն լռություն
անծայր հարթավայր
անծիր սարսափ
անկաշառ մարգարե
անկատար ուխտ
անհամարձակ աշակերտ
անհանգրվան հեռուներ
անհայտ անուն
անհուն պատկեր*

*անհուր լռություն
անհույս ոռոց
անհուր սիրտ
անմար սիրտ
անմար փառք
անմեռ ուղի
անմրցելի հանդես
անպտուղ անապատ
անսահման եղեռն
անտերև ճյուղքեր
անօգ մանուկ
անուժ սիրտ և այլն:*

Գրաբարի անցյալ դերբայի ՅԱԼ վերջածանցով մակդիրների հաճախակի կիրառությունը, որը նաև հնաբանություն է, դժոխային մթնոլորտին հաղորդում է բնորոշ տիպական երանգավորում՝ *գարհուրյալ հայացք, տառապյալ մանկություն, փողփողյալ տողեր, գառնայալ լուսին, մեռյալ մանուկներ, հարյալ կմախք և այլն:*

Իսկ միևնույն արմատի կրկնությամբ ստեղծված բառաբարդումները, ինչպես՝ *ժանտաժանտ, սևասև, ծայրեծայր, շարեշար, հևիհև, բարձրաբերձ և այլն*, ավելի սաստկացնում ու խտացնում են գույները: Սրանցից բացի Զարեհցը կիրառել է նաև գունային մակդիրներ՝ *կարմիր Ավարայր, կարմրավուն լույս, կարմիր բլուր, կարմիր կրակներ ու հուրեր, կարմրավուն բոց, դեղին մատներ, դեղին մահիկ, դեղնած ծաղկեփունջ, դեղին կրակ, դեղին ճակատ, դեղին Արքա և այլն:*

Հետաքրքիր է, որ իր մտահոգացումներն իրականացնելու համար Չարենցն այս պոեմում կիրառել է գլխավորապես երկու գույն՝ *կարմիրը* և *դեղինը*, կարմիրը՝ արյան տեսիլների պատկերման, իսկ դեղինը՝ մոայլ ու դժոխային տրամադրությունների արտահայտման համար:

Պոեմի տարբեր մասերում բանաստեղծը կիրառել է ճարտասանական դիմումը՝ որպես անցյալի խոսքի վարպետների ու մտքի տիտանների հանդեպ սիրո ու ակնածանքի արտահայտություն և գնահատման միջոց.

Ձեզ եմ դիմում, ո՛վ անցյալի վսեմ քերթողահայեր...

Քեզ անհույզ, մարմարյա Հոմերոս, որ երգել ես հերոսների մահը...

Եվ քեզ՝ լատինական փառքի հռչակը ավետող

Ո՛վ դյուցազնական և բարբարոս Վիրգիլ,

Եվ քե՛զ, արեգնական հանճար, շոայլորեն փաթթած Ֆիրդուսի...

Ծարտասանական այս դիմումնաձևում դրսևորվում է մարդկության մեծերի վերաբերմունքը հայոց դժոխային իրականությանն ու մեր ժողովրդի հանճարների հանդեպ: Սրան զուգահեռ կիրառվում է նաև հոետորական հարցը, որի չարտահայտված, բայց կոահելի պատասխանը դառնում է այս կամ այն քերթողի, հերոսի գործի ու վաստակի բնութագիրը: Դա առանձնապես ցայտուն է երևում պոեմի այն դրվագներում, ուր ներկայացված են Վարպետի՝ Դանթեի, Ղ. Ալիշանի, Մ. Մեծարենցի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի տեսիլային հանդիպումներն ու հարաբերությունները:

« - Ո՛վ տխուր ու խեղճ գուսաններ՝, նոխազներ՝, կյանքի բարբարոս,

Բարբառեց Վարպետը հանկարծ՝ դառնալով ճոցա սովերին.

- Դուք կոչված էիք լինելու Լույսի ու Խնդության՝ փարոս,

Բայց սրտերը ձեր բոցավառ - այն՝ Ստի՛ն ողջակեզ բերիք...

- Դուք կարո՞ղ էիք Քերթության և Մտքի պարտեզում

Մաշակել Ոգո՛ւ խնդություն՝ սնվելով խոհերով ու բանիվ,

Եվ երթում այս մութ ու դաժան կա՞ր աղոյոք ավելի մեծ զոհ,

Քան հանճարը ձեր բոցավառ՝ մատուցած այս պի՛ղծ սեղանին»...

Ե. Չարենցի հզոր անհատականությունն ու հանճարը յուրօրինակ դրսևորում են գտել նաև այն ինքնատիպ, բազում ու բազմապիսի փոխաբերություններում, որոնք բնորոշ են նրա իսկ ոճին ու պատկերավոր մտածողությանը. *ուրվական* է կարծես նա *ցավի*, Ելնում էր շունչը կրծքից մի խոպոտ, *փայտյա աղմուկով*, Որ *վայրի մի պար* էր պարում *կաղկանձող սվազի ներքո*, Սկսեց քրքջալ և վերից մեր գլխին *պաղ մոխիր* թափել, Մազերին *եղյամ էր ցանել մառախուղը* կարծես Հյուսիսի, Վարդապետը կամ քերթողն այն հզոր՝ *մորուքով մերկությունը ծածկած, կարմրավուն, արնագույն մի բոց՝ այրելով հոնքերը լուսնի*, Եվ *զուլալ, արծաթյա ձայնով երգում էր* արևի մասին, Բարձրացավ *գանգերի մի բուրգ*, և *բուրգը աստղերին հասավ* և այլն:

Պոեմում՝ որպես ոճական հնարանք, առատ են նպատակային կրկնությունները. դրանք հանդիպում են և՛ տողասկզբում, և՛ տողամիջում, և՛ տողավերջում: Ինչպես Լ. Եզեկյանն է բնորոշել՝ «կրկնությունը շարահյուսական դարձույթ է, լեզվի արտահայտչական այնպիսի հնարանք, որ ամենից առաջ նպաստում է խոսքի քնարականությանը, առավել ևս՝ նրա երաժշտականությանն ու հուզականությանը»: Եվ իրոք, չարենցյան բանատողերում կրկնությունները ոչ միայն ստանձնում են այդպիսի դեր, այլև ավելի են ընդգծում երևույթը և տեսանելի դարձնում այն. Դու *նայում ես ոգուս խորքը*, երկա՛ր *նայում ես ոգուս խորքը...*, Նավարկում է *դեպի Անցյալը*, *դեպի անցյալը դառն*, *դեպի ափը Մահվան* ու Սարսափի..., Մոտենում է մեկը *դեպի մեզ*, *դեպի մեզ* է գալիս ահա նա..., *Անցնում են*, *անցնում են* անվերջ, գնում են շարքերով անձիր..., Իր խրոխտ *դեմքին հակառակ*, *հակառակ առնական տեսքին* և այլն:

¹ Լ. Եզեկյան, Չարենցի «Ցաղարանի» խոսքարվեստը, «Չարենցյան ընթերցումներ», գիրք 6, Եր., 1998, էջ 126:

«Մահվան տեսիլ» պոեմի արտահայտչամիջոցների համակարգում իրենց որոշակի տեղն ու կշիռն ունեն *ինչպես* կապով ձևավորված համեմատությունները՝ *Ամհամարձակ, ինչպես աշակերտ, ուժերիս, գրչիս անվստահ...*, *Եվ դեմքը նրա մոմեղեն, սիրթնած, գունատ, ինչպես մահ...*, *Եվ մաքուր էր, ջինջ էր այնքան, ինչպես ցողը՝ դաշտերում շաղած...*, *Անուղի, ինչպես մոլորված երկու կույր կամ անօգ մանուկ...*, *Եվ ձայնը նրա քնարի, որ մնաց էր ձայնին թիթեղի, Հնչում էր, ինչպես մի հիվանդ, մահամերձ ընկած մանկան լաց...*, *Եվ դարձել էր հարցական նշանի նման մի պատկեր...*, *Նման էր հսկա մորեխի, շարժվում էր թոփչքով թեթև և այլն:*

1936 թ. գրված վերջին «Մահվան տեսիլը» Ե. Չարենցը գրել է ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի մահվան առիթով և ձոնել նրա հիշատակին: Եթե նախորդ տեսիլներում տիրում են մոռալ գույներն ու դժոխային տրամադրությունները, ապա այստեղ բուն մահվան պատկերից առանձնանում ու ընդօգծվում է «արևային քաղաքի» երազ-պատկերը՝ որպես մեռնող մարդու և մարդկային հանճարի հաղթանակը մահվան նկատմամբ:

Որքա՛ն նման է եղել պահն այդ մարող կամթելի

.....
Նրա կոպերը երեկ երբ քարացել են խաղաղ -
Կապույտ բոցով բռնկված վերջին շերտում ուղեղի
Նա տեսել է երևի արևային մի քաղաք...

Այս տեսիլում բանաստեղծն ուրվագծել է «արևային քաղաք» ապագա Երևանի պատկերը՝ բոլորաձիգ երկարած պողոտաներով ու փողոցներով, սիրտ պայթելու չափ պայծառ պլունաշարքերով, տերրասներով ու մարմարե աստիճաններով, *ոսկեգօծ պարտեզներով ու երգածայն շատրվաններով, երկնահաս աշտարակներով ու կորանհատ կամարներով, մարմնագույն մարմարից, գանգրահեր գրանիտից, վարդաբույր տուֆաքարից ու սրբատաշ բիլ բազալտից կառուցված շինություններով:*

Մակդիրների այս առատության մեջ անգամ նկատվում է, որ տեսիլում Ե. Չարենցը արդեն գործածել է նոր գույն՝ *կապույտ բառը*, և միայն մեկ անգամ՝ նրա *բիլ* հոմանիշը՝ *կապույտ բոց, կապույտ ցնորք, մարմարի կապույտ կող, բիլ բազալտ սրբատաշ:* Ապագա Երևանի տեսանելի ցնորքը գրեթե իրական է այնքան, որ

Պարզե՛լ է ձեռքը դողողոջ դեպի ցնորքն այդ կապույտ,
Այնքան մո՛տ է, այնքան մոտ - կըշռափի նա հիմա -
Բայց ծանրացել է հանկարծ ձեռքն հանճարեղ ու հմուտ,
Ընկել է վար - չոր կրծքին... Լռություն: Մահ:

Ե. Չարենցի «Մահվան տեսիլ»-ների լեզվաոճական քննությունը ցույց է տալիս, որ հանճարեղ բանաստեղծի հղացումների, մտքի թռիչքների, երևակայության ճախրանքների, հուզառատ ներաշխարհի գեղարվեստական մարմնավորումն իրականացվել է բազմաթիվ ու բազմապիսի արտահայտչամիջոցների՝ մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների, կրկնությունների, ոճական յուրահատուկ արժեք ունեցող հնարանությունների, բառակազմական տարբեր միջոցներով նորաստեղծ բառերի կիրառմամբ: Դրանք, բանաստեղծի ինքնատիպ լեզվամտածողության արգասիքը լինելով, ոչ միայն հարստացրել են նրա անհատական ոճը, այլև հայ բանարվեստն ու խոսքի մշակույթը:

Н. А. ТИРАБЯН - Искусство слова в трех одноименных стихотворениях («Видение смерти») *Евгине Чаренца.* - В статье ставится вопрос о том, что написанные по разным поводам, но одинаково озаглавленные («Видение смерти») три стихотворения Чаренца являют собой самостоятельные системы с определенными чертами общности. Отображение реальных фактов и явлений, а также претворение творческой мысли, душевного мира великого поэта достигнуто использованием многочисленных и многообразных выразительных средств, как-то: эпитеты, метафоры, сравнения, повторы, имеющие стилистическое значение архаизмы и неологизмы.